**Լեռնային Ղարաբաղի Հանրապետության**
**անշարժ գույքի շուկան 2009թ. I կիսամյակում**

*Հոդվածը ներկայացնում է ԼՂՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից իրականացված, անշարժ գույքի շուկայի մոնիտորինգի /համակարգված դիտարկումներ /աշխատանքների արդյունքները և նպատակ ունի քաղաքացիներին իրազեկ դարձնելու ԼՂՀ անշարժ գույքի շուկայի իրավիճակը: Հոդվածում ներկայացվող Ստեփանակերտ քաղաքում և հանրապետության շրջաններում անշարժ գույքի շուկայական գները ձևավորվել են կոմիտեի ստորաբաժանումների կողմից գրանցված առուվաճառքների գործարքների պայմանագրային գների, մեր կողմից կատարված հարցումների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող անշարժ գույքի գների վերլուծության արդյունքում:*

2009թ. I կիսամյակում կոմիտեի ստորաբաժանումների կողմից իրականացվել են 3015 իրավունքների պետական գրանցումներ , որոնց քանակը 2008թ. II կիսամյակի համեմատ նվազել է` 20,1%-ով, իսկ 2008թ. I կիսամյակի համեմատ ` 19,4%-ով:

Ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների, իրականացված գրանցումների ծավալները ունենն հետևյալ բաշխվածությունը.



2008,2009թթ. I կիսամյակներում և 2008թ. II կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխումներն ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *I կիսամյակ 2008թ.* | *փոփոխումը* | *I կիսամյակ 2009թ.* | *փոփոխումը* | *II կիսամյակ 2008թ.* |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *1700* | *-42,9%* | *970* | *-40,9%* | *1640* |
| Ասկերան | *405* | *22,0%* | *494* | *11,3%* | *444* |
| Մարտունի | *453* | *1,5%* | *460* | *-5,9%* | *489* |
| Մարտակերտ | *392* | *-14,8%* | *334* | *-5,9%* | *355* |
| Հադրութ | *133* | *-14,3%* | *114* | *-13,0%* | *131* |
| Շուշի | *327* | *-11,0%* | *291* | *-36,3%* | *457* |
| Քաշաթաղ | *333* | *5,7%* | *352* | *37,0%* | *257* |
| ***Հանրապետություն*** | ***3743*** | ***-19,4%*** | ***3015*** | ***-20,1%*** | ***3773*** |

Նույն ժամանակահատվածում անշարժ գույքի նկատմամբ իրականացված իրավունքների գրանցումները, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2008,2009թթ. II կիսամյակներում և 2008թ. II կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխումներն ըստ գործարքների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| *Գործարքների տեսակները* | *I կիսամյակ 2008թ.* | *փոփոխումը* | *I կիսամյակ 2009թ.* | *փոփոխումը* | *II կիսամյակ 2008թ.* |
|---|---|---|---|---|---|
| *Առուվաճառք* | *619* | *-21,2%* | *488* | *-23,3%* | *636* |
| *Նվիրատվություն* | *180* | *5,0%* | *189* | *11,8%* | *169* |
| *Վարձակալում* | *666* | *14,6%* | *763* | *35,5%* | *563* |
| *Գրավադրում* | *555* | *-53,7%* | *257* | *-61,0%* | *659* |
| *Ժառանգություն* | *224* | *-34,4%* | *147* | *-39,8%* | *244* |
| *Օգտագործում* | *14* | *2,9 անգամ* | *41* | *7,9%* | *38* |
| *Սեփականաշնորհում* | *495* | *-84,2%* | *78* | *-77,7%* | *349* |
| *Մասնավորեցում* | *127* | *-66,9%* | *42* | *-61,8%* | *110* |
| *Առաջնային գրանցում* | *863* | *17,0%* | *1010* | *0,5%* | *1005* |
| ***Ընդամենը գործարք*** | ***3743*** | ***-19,4%*** | ***3015*** | ***-20,1%*** | ***3773*** |

2009թ. I կիսամյակում հանրապետությունում ընդհանուր առմամբ իրականացվել են 488 առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակը նախորդ կիսամյակի համեմատ նվազել է` 23,3%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ` 21,2%-ով, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ իրականացվել են 62 իսկ բնակելի տների նկատմամաբ` 78 առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ:

2009թ. I և 2008թ. II կիսամյակներում հանրապետության մի շարք քաղաքային համայնքներում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների և բնակելի տների առուվաճառքների գործարքների պայմանագրային գների և կոմիտեի կողմից իրականացված անշարժ գույքի շուկայի դիտարկումների արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական նվազագույն, առավելագույն և միջին գները ու նրանց փոփոխումները :

## *Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների*

| *Քաղաքներ* | *2008թ. II կիսամյակ* <br> *1 քմ արժեքը /$/* | | | *2009թ. I կիսամյակ* <br> *1 քմ արժեքը /$/* | | | *փոփոխումը 2008թ. II կիսամյակի նկատմամբ* |
|---|---|---|---|---|---|---|---|
| | *նվազագույն* | *առավելագույն* | *միջինը* | *նվազագույն* | *առավելագույն* | *միջինը* | |
| Ստեփանակերտ | 850,0 | 950,0 | ***900,0*** | 650,0 | 800,0 | ***725,0*** | ***-19,4%*** |
| Ասկերան | 170,0 | 228,0 | ***199,0*** | 137,0 | 165,0 | ***151,0*** | ***-24,1%*** |
| Մարտունի | 165,0 | 218,0 | ***191,5*** | 130,0 | 160,0 | ***145,0*** | ***-24,3%*** |
| Մարտակերտ | 80,0 | 103,0 | ***91,5*** | 55,0 | 85,0 | ***70,0*** | ***-23,5%*** |
| Հադրութ | 100,0 | 113,0 | ***106,5*** | 74,0 | 90,0 | ***82,0*** | ***-23,0%*** |
| Շուշի | 150,0 | 300,0 | ***225,0*** | 120,0 | 245,0 | ***182,5*** | ***-18,9%*** |

## *Բնակելի տներ*

| *Քաղաքներ* | *2008թ. II կիսամյակ* <br> *միջինը 200 քմ շինությամբ և միջինը 1000քմ տնամերձով բնակելի տան արժեքը /$/* | | | *2009թ. I կիսամյակ* <br> *միջինը 200 քմ շինությամբ և միջինը 1000քմ տնամերձով բնակելի տան արժեքը /$/* | | | *փոփոխումը 2008թ. II կիսամյակ նկատմամբ* |
|---|---|---|---|---|---|---|---|
| | *նվազագույն* | *առավելագույն* | *միջինը* | *նվազագույն* | *առավելագույն* | *միջինինը* | |
| Ստեփանակերտ | 86500,0 | 134000,0 | ***110250,0*** | 68500,0 | 103000,0 | ***85750,0*** | ***-22,2%*** |
| Ասկերան | 14500,0 | 19700,0 | ***17100,0*** | 11800,0 | 14600,0 | ***13200,0*** | ***-22,8%*** |
| Մարտունի | 12000,0 | 17700,0 | ***14850,0*** | 10300,0 | 12400,0 | ***11350,0*** | ***-23,6%*** |
| Մարտակերտ | 7500,0 | 11000,0 | ***9250,0*** | 5700,0 | 8300,0 | ***7000,0*** | ***-24,3%*** |
| Հադրութ | 8100,0 | 11100,0 | ***9600,0*** | 5900,0 | 8500,0 | ***7200,0*** | ***-25,0%*** |
| Շուշի | 10200,0 | 19300,0 | ***14750*** | 7500,0 | 15700,0 | ***11600,0*** | ***-21,4%*** |

2009թ-ի I կիսամյակում հանրապետությունում իրականացվել են 763 վարձակալության գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակը նախորդ կիսամյակի համեմատ աճել է՝ 35,5%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 14,6%-ով:

Վարձակալության գործարքների քանակների փոփոխումներն ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների 2008,2009թթ. I կիսամյակներում և 2008թ. II կիսամյակում ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *I կիսամյակ 2008թ.* | *փոփոխումը* | *I կիսամյակ 2009թ.* | *փոփոխումը* | *II կիսամյակ 2008թ.* |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *58* | *62,1%* | *94* | *-6,9%* | *101* |
| Ասկերան | *95* | *51,6%* | *144* | *23,1%* | *117* |
| Մարտունի | *168* | *-8,3%* | *154* | *5,5%* | *146* |
| Մարտակերտ | *206* | *-26,7%* | *151* | *49,5%* | *101* |
| Հադրութ | *13* | *92,3%* | *25* | *8,3 անգամ* | *3* |
| Շուշի | *9* | *55,6%* | *14* | *-12,5%* | *16* |
| Քաշաթաղ | *117* | *54,7%* | *181* | *2,3 անգամ* | *79* |
| ***Հանրապետություն*** | ***666*** | ***14,6%*** | ***763*** | ***35,5%*** | ***563*** |

2009թ-ի I կիսամյակում հանրապետությունում գրանցվել են 3690,92 հա ընդհանուր մակերեսով, գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության 541 գործարքներ, որոնց քանակները և մակերեսները ըստ հանրապետության շրջանների ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | ***2009թ-ի I կիսամյակում վարձակալված հողերի*** | |
|---|---|---|
| | ***քանակը*** | ***մակերեսը /հա/*** |
| *Ասկերան* | *130* | *989,5* |
| *Մարտունի* | *170* | *444,68* |
| *Մարտակերտ* | *96* | *768,9* |
| *Հադրութ* | *3* | *25,0* |
| *Շուշի* | *6* | *57,87* |
| *Շահումյան* | *1* | *20,0* |
| *Քաշաթաղ* | *135* | *1384,97* |
| ***Հանրապետություն*** | ***541*** | ***3690,92*** |

Հանրապետությունում անշարժ գույքի շուկայի դիտարկումները ցույց են տալիս, որ վարձակալության համար, որպես ակտիվ անշարժ գույքի տեսակներ, հանդես են գալիս, Ստեփանակերտում՝ հասարակական նշանակության օբյեկտները, իսկ շրջաններում՝ գյուղատնտեսական նշանակության հողերը:

2009թ-ի I կիսամյակում հանրապետությունում իրականացվել են 257 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակը նախորդ կիսամյակի համեմատ նվազել է` 61,0%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ` 53,7%-ով:

2008,2009թթ. I կիսամյակներում և 2008թ. II կիսամյակում գրավադրման գործարքների քանակների փոփոխություններն ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *I կիսամյակ 2008թ.* | *փոփոխումը* | *I կիսամյակ 2009թ.* | *փոփոխումը* | *II կիսամյակ 2008թ.* |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *387* | *-53,2%* | *181* | *-54,2%* | *395* |
| Ասկերան | *61* | *-57,4%* | *26* | *-60,0%* | *65* |
| Մարտունի | *51* | *-62,7%* | *19* | *-80,0%* | *95* |
| Մարտակերտ | *10* | *30,0%* | *13* | *-27,8%* | *18* |
| Հադրութ | *11* | *-63,6%* | *4* | *-80,0%* | *20* |
| Շուշի | *33* | *-57,6%* | *14* | *-73,1%* | *52* |
| Քաշաթաղ | *2* | *2-ով պակաս* | *0* | *14-ով պակաս* | *14* |
| ***Հանրապետություն*** | ***555*** | ***-53,7%*** | ***257*** | ***-61,0%*** | ***659*** |

2009թ. I կիսամյակում հանրապետությունում իրականացվել են 120 սեփականաշնորհման և մասնավորեցման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակը նախորդ կիսամյակի համեմատ նվազել է` 73,9%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ` 80,7%-ով:

Սեփականաշնորհման և մասնավորեցման գործարքների քանակների փոփոխումներն ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների 2008,2009թթ. I կիսամյակներում և 2008թ. II կիսամյակում ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | ***I կիսամյակ 2008թ*** | ***փոփոխումը*** | ***I կիսամյակ 2009թ*** | ***փոփոխումը*** | ***II կիսամյակ 2008թ*** |
|---|---|---|---|---|---|
| *Ստեփանակերտ* | *352* | *-84,7%* | *54* | *-74,9%* | *215* |
| *Ասկերան* | *4* | *-25,0%* | *3* | *-84,2%* | *19* |
| *Մարտունի* | *12* | *-25,0%* | *9* | *-43,8%* | *16* |
| *Մարտակերտ* | *11* | *36,4%* | *15* | *-34,8%* | *23* |
| *Հադրութ* | *11* | *-63,6%* | *4* | *-85,7%* | *28* |
| *Շուշի* | *88* | *-67,0%* | *29* | *-77,9%* | *131* |
| *Քաշաթաղ* | *144* | *-95,8%* | *6* | *-77,8%* | *27* |
| ***Հանրապետություն*** | ***622*** | ***-80,7%*** | ***120*** | ***-73,9%*** | ***459*** |

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

«Գնահատման և համակարգված դիտարկումների բաժին»

ՀԵՌ․ : 95-17- 49